

## ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Սմբատ Խ. Հովհաննիսյան  
պալատի գիր. թեկնածու

### ՖԵՐՆԱՆ ԲՐՈԴԵԼԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ\*

Ֆրանսիական Աննալների պատմագիտական դպրոցի ձեռքբերումների համատեքստում նշանակալի է նրա երկրորդ սերնդի ներդրումը, որի ներկայացուցիչները հայտնի են նաև «բրոդելյան սերունդ» անվամբ: **Ֆերնան Բրոդել** (1902-1985) ոչ միայն այդ սերնդի խոշորագույն ներկայացուցիչն է, այլև 20-րդ դարի երկրորդ կեսի թերևս ամենաականավոր պատմաբանը: Նրա ազդեցությունը համաշխարհային պատմագիտական մտքի վրա այնքան մեծ է, որ Ս. Քինսերի<sup>1</sup> բնորոշմանը՝ եթե երբեմ «Նորելյան մրցանակ տրվեր պատմագետներին, ապա դա անվերապահորեն կպատկաներ ֆ. Բրոդելին»<sup>2</sup>:

#### 1. «Համընդգրկուն պատմության» հղացքը և պատմական ժամանակի բազմաչափությունը

Ֆ. Բրոդելի պատմագիտության հիմնական ձեռքբերումներից էր պատմության «համընդգրկուն» հղացքի մշակումը: Այն ուրվագծել էր դեռևս Աննալների դպրոցի հիմնադիրներ L. Ֆերի և Ս. Բլոկի մոտ՝ տարասեռ կրթանքների (discipline) մերողների և մոտեցումների համադրությամբ: Այն է «միջկրթանքային» (interdisciplinaire) հետազոտության հանդեպ նրանց հակումը պետք է վերաճեր «համընդգրկուն պատմության» հղացքին:

Ի մի բերելով իր ուսուցիչների տեսությունը՝ Ֆ. Բրոդելը կարևորում էր «պատմության մեջ ամրողի և մասերի» համահարաբերակցության հիմնախնդիրը: Շուտով նման մոտեցումը դառնում է աննալականների «դասական հարացույցներից» մեկը՝ պայմանավորելով պատմական անցյալի համակարգված, ընդգրկուն ըմբռնումը: Նման մոտեցմամբ մարդկային համակեցության հիմնարար բաղադրիչները (տնտեսություն, մշակույթ, քաղաքական կառույց, կրոն, հոգեբանություն և այլն) դիտարկվում են իրքն մեկ ամրողություն՝ ինչպես

\* Հեղինակի կողմից գործածության մեջ դրվող եզրերը երբեմն տարբերվում են ներկայում մեր համարակական գիտություններում կիրառվող հասկացություններից, ուստի դրանց անվանումները գործահենարար բերվուն են նաև ֆրանսերենով: Խնդր.: Ընդունվել է տպագրության 1. 03. 2011:

1. **Ս. Քինսեր** (Samuel C. Kinser) – Հյուսիսային հիմնյութ համալարանի պատվավոր պոլիտիկոս:

2. S. Kinser, *Annaliste Paradigm?* The Geohistorical Structuralism of F.Braudel, American Historical Review, 86, (1981), p. 63.

համաժամանակյա (սինքրոնիկ), այնպես էլ տարածամանակյա (դիաքրոնիկ) հարթություններում<sup>3</sup>:

Ֆ. Բրոդելը իր հետազոտություններում մեկնարկում էր այն իրողություննից, որ «մարդու մասին մեկուսի գիտությունների և նրանց հատվածների բարեփոխումը»<sup>4</sup> ենթադրում է համընդգրկունության հիմնախնդիրը՝ «դանդաղ գործընթացներից շարժվելով դեպի մարդկային կենսագործունեության ավելի շարժուն և ակտիվ ոլորտները»<sup>5</sup>: Այսու՝ «համընդգրկուն պատմության» հեռանկարը կառուցակազմելու համար Ֆ. Բրոդելն իբրև մեկնաբետ է ընդունում «գեղատմությունը» (géohistoire), որն, ըստ նրա, ներկայացնում է «գրեթե անշարժ պատմությունը, շրջակա միջավայրի հետ ակտիվ համահարաբերակցվող մարդու պատմությունը»<sup>6</sup>: Ակնհայտ է, որ այս մոտեցմամբ Ֆ. Բրոդելը մեկնարկում էր **Վ. Դը լա Բլաշի**<sup>7</sup> «մարդկային հանրությի աշխարհագրության» տեսությունից և իր «գեղատմությունը» կառուցում հետևյալ երեք հիմնայուների վրա. 1) գեղատմությունն ունի կոնկրետ օրյեկտ, որը «համարված է միջավայրի հետ», 2) գեղատմությանը ներհատուկ են աշխարհաքաղաքական գործընթացները, որոնց առանձնահատկություններն ի հայտ են գալիս ժամանակի երկար տևողության մեջ, 3) գեղատմությունը գերակարող է պատմական մյուս ոճորնությունների նկատմամբ<sup>8</sup>:

Եթե Կ. Լսի-Ստրոսը<sup>9</sup> մարդկության պատմության «գաղտնիքները» փորձում էր վեր հանել կենսաբանական և հոգեբանական ժամանակների համադրությամբ, ապա Ֆ. Բրոդելը դրանց հակադրում էր «ֆիզիկական բնության անհադրահարելիությունը, աշխարհագրական ժամանակի դանդաղընթացությունը»<sup>10</sup>: Գեռպատմության համատեքստում մարդկային պատմությունը չի ինքնամեկուսանում, այլ պարագելով աշխարհագրական, կիմայական, ժողովրդագրական և այլ գործոններ, ընդլայնում է անցյալի ընկալման հորիզոնը: «Դա հնարավորություն է տալիս պատմության ծիրում ներառված բոլոր գործոնների հավասարակշռությամբ ձևավորել նրա անշարժ կազմը»<sup>11</sup>: Ֆ. Բրոդելը հաճախ դա բանաձևում է իրեն «անշարժ պատմություն» (histoire immobile), որի շնորհիվ հնարավոր է դառնում հայրահարել «պատմության ժամանակագրական սահմանները»<sup>12</sup>:

«Անշարժ պատմության» հենքի վրա էլ ծավալվում է «դանդաղլեթաց ռիթմի պատմությունը»՝ «ընկերային պատմությունը [...]», խճավորումների և կոլեկտիվ կազմավորումների ապահովությունը»<sup>13</sup>. «համբոնիանուր և իհմնային փոփոխու-

<sup>3</sup> Տես Ա. Ստեփանյան, Ե. Մարգարյան, ժամանակի կառույցը Ֆ. Բրոդելի պատմահայեցողության ծիրում, «Պատմություն և կոթոքություն», 2005, N 1-2, էջ 34:

<sup>4</sup> F. Braudel, *Écrits sur l'Histoire*, Paris, 1969, p. 7.

<sup>5</sup> F. Braudel, op. cit., p. 138.

<sup>6</sup> Ф. Бродель, Средиземное море и Средиземноморский мир в эпоху Филиппа II, Роль среды, т. I, М., 2002, с. 20.

#### 7.4. Դրամիաց (Vidal de la Bla)

**4.** Լ. Լ. Լևի-Ստրուս (Claude Lévi-Strauss, 1908-2009) – ֆրանսիացի աշխատավոր հետազոտության համբույրի աշխատավորությունը՝ հյաղքի և պարողի:

<sup>10</sup> E. Pesse, *L'histoire en miettes. Des Annales à la "nouvelle histoire"*, Paris, 2005, p. 122.

<sup>10</sup> F. Dosse, *L'histoire en miettes. Des Annales à la "nouvelle histoire"*, Paris, 2005, p. 132.

11 E. Juillard, Aux frontières de l'histoire et de la géographie, «Revue historique», t. CCXV, 1956, p. 271.  
12 Ф. Бродель, Средиземное море и средиземноморский мир в эпоху Филиппа II, Коллективные судьбы и универсальные судьбы. М., т. 2, 2003, с. 17.

13 Ф Бордель Средиземное море т 1 с 20

թյունների պատմությունը», «որը ոչ թե խոսում է «իրերի», այլ մարդու մասին, մարդկանց մասին կամ, եթե կարելի է՝ այն մասին, թե ինչպես է օգտվել մարդը դրանցից»<sup>14</sup>:

Հակասական այս խնդիրը լուծելու համար Ֆ. Բրոդելը հանգամանորեն անդրադարձել է տնտեսության և պետությունների, առանձին հասարակությունների և քաղաքակրթությունների պատմությանը<sup>15</sup>: Նրա հետազոտության հիմնական առարկան ընկերային կառուցցներն են: Այդ կապակցությամբ պատմության հոլովույթում նա ընդգծում է հասկապես երկու թեմա՝ **տեխնոլոգիաների և փոխանակությունների** պատմությունը. «պատմության դանդաղընթաց մուտքի և նրա հանկարծական արագընթացության, կառուցվածքի և համակցության միջև առկա աններդաշնակությունը մնում է իրեն չափարտվող երկխոսություն: Անհրաժեշտ է այս գործընթացները զնահատել իրենց փոխկախվածության մեջ՝ նախապես վստահ չլինելով, թե դրանցից որոնք են գերակայող և որոնք՝ պայմանավորված մյուսներով»<sup>16</sup>: Այս կերպ հնարավոր է դառնում միմյանց համադրել «անշարժությունն ու շարժունությունը, դանդաղընթացությունն ու արագընթացությունը»<sup>17</sup>: Այս հիմնամբ Ֆ. Բրոդելը պատմական անցյալի «կառուցվածքային» և «համակցային» դրսերումները կառուցում է չորս հիմնարար համակարգերի ձևով՝ (1) **տնտեսություններ**, (2) **կայսրություններ**, (3) **հասարակություններ** և (4) **քաղաքակրթություններ**:

Նման խնդրարկումից բխում է քաղաքակրթությունների հիմնախնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը, որի նպատակն է «ոչ թե հանրագումարի բերել պատմության բոլոր փաստերը, ինչպես սպասելի եր, այլ մշակել մեկնարանության նոր մեթոդներ և միջոցներ»<sup>18</sup>:

Գեղատմության և տնտեսական ու հասարակական պատմությունների համադրմամբ ասպարեզ է բացվում «անհատականության պատմության» ծավալման համար՝ «**իրադարձություններ, քաղաքականություններ և մարդիկ**»<sup>19</sup>: Ծիշտ է, այն ավանդական «քվարկումների կամ իրադարձությունների ժամանակագրության» պատմությունն է, սակայն այս դեպքում պատմությանը ներկայացվում են այլ պահանջներ: Մասնավորապես՝ մեկուսի փաստերից հնարավոր է դառնում զնալ դեպի ամբողջականը, որտեղ համադրման շնորհիվ հնարավոր է բացահայտել «մարդկային պատմության տարածությունները»<sup>20</sup>:

Պատմության այս լմբոնումը Ֆ. Բրոդելը որոշ առումով նմանեցնում էր **L. Ֆոն Ռանկեի**<sup>21</sup> պատմատեսության հետ, սակայն անմիջապես շեշտում էր նմանության սահմանափակությունը, քանի որ L. Ռանկեի դեպքում պատմագիտական ըմբռնումների կենտրոնում պատմական կարծ ժամանակի տիրույթն է և քաղաքական իրադարձությունների ուղղակի արձանագրությունը: Անտեսվում են պատմության տնտեսական, ընկերային, մշակութային, կրոնական, հոգեբա-

14. **Ф. Бродель**, Средиземное море ..., т. 2, с. 17.

15 **Տե՛ս **Ф. Бродель**, Средиземное море ..., т. 1, с. 20.**

16 **А. Грабски, Ф. Бродель:** вопросы методологии истории цивилизаций, Цивилизации, Вып. 1, М., 1992, с. 182.

17 **Ф. Бродель**, Средиземное море ..., т. 2, с. 791.

18 Там же, с. 17.

19 **S. Kinser**, op. cit., p. 105.

20 **Ф. Бродель**, Средиземное море ..., т. 3, 2004, с. 20.

21 **L. ֆոն Ռանկե** (Leopold von Ranke, 1795-1886) — գերմանացի խոշոր պատմագետ, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր (1825-1871), Պրուսիայի պաշտոնական պատմագիրը (1841-ից): Սկզբնաղյուրների և փաստերի «օբյեկտիվ քննադատական հետազոտության» հիմնադիրը, ըստ որի՝ պատմությունը պետք է գրվի հենց այնպես, «ինչպես այն իրականում տեղի է ունեցել»:

նական խորքային դիտանկյունները: Մինչդեռ նոր մոտեցման պայմաններում իրադարձությունները, որոնք պատմության ընդամենը «փոշին են կամ կարծ առկայօղումները», ձեռք են բերում նոր իմաստ, քանի որ «իրենց առկայօղումներով նրանցից յուրաքանչյուրը վկայություններ է տալիս, լուսաբանում պատմության ընապատկերի մոտք անկյունները՝ քոյլ տալիս նայել նրա խորքերը»<sup>22</sup>: Քանզի «Տնտեսական և քաղաքական փաստերը հեշտությամբ համաձայնեցվում են ժամանակի ավելի կարծ տիրությում, քան հասարակական կյանքի այլ երևույթները: Վերջիններս քոյլ են տալիս նշանակել առավել ընդհանուր իրությունները և անցում կատարել դեպի խորքային կառույցների և դրանք արտահայտող հասկացությունների ըմբռնումը»<sup>23</sup>:

Ընդհանրացնելով ասվածը՝ կարող ենք արձանագրել հետևյալը. անցյալի իրադարձությունների հիմքի վրա՝ Ֆ. Բրոդելը պատմությանը հաղորդում է ժամանակատարածական և բովանդակային նոր չափում: Նրանում մարդը հանդես է գալիս համապարփակ ներգրավվածությամբ. «Նա համապատասխանում է աշխարհագրական միջավայրի պահանջներին: Ապրում է խմբի մեջ: Եվ, վերջապես, ապրում է իր անհատական կյանքը, որի դրսւորումները դեպք առ դեպք արձանագրվում են ժամանակագրություն»<sup>24</sup>:

Արդ, «համընդգրկուն պատմության» հասկացությունը ձևակերպելու համար Ֆ. Բրոդելը զգում է «պատմական ժամանակի» նոր հղացքի անհրաժեշտությունը: Այն իր վերջնական բանաձևում ստացավ 1958 թվականին հրատարակած նրա «Պատմությունը և ընկերային գիտությունները. երկար տևողություն» տեսական հոդվածում<sup>25</sup>: Սա տնտեսագետ Գ. Կոնդրատիսի «Տնտեսական շրջափուլերի»<sup>26</sup> և ընկերաբան Ժ. Գուրվիչի «ընկերային ժամանակի»<sup>27</sup> վերլուծական և համադրական տարրերակն է, որը միտված է հաղթահարելու պատմագիտության գուտ փաստագրական սահմանափակությունը<sup>28</sup>:

«Բրոդելյան ժամանակաշափի» հղացքն անկարելի է ընկալել առանց նրա ընկերային բովանդակության դիտարկման: Դեռ 1930-ական թվականներին լրջորեն արծարծվում էր այն քաղաքաբարը, թե «յուրաքանչյուր գիտություն ունի իրեն առանձնահատուկ ժամանակաշափի»: Հայտնի է, որ 1937 թվականին Պ. Սորոկինն ու Ռ. Մերթոնը<sup>29</sup> առաջադրեցին «ընկերային ժամանակ» հասկացությունը՝ իբրև «ընկերային կյանքի կերպավոխությունների և շարժումների

22 Տաճ շ. 16.

23 Տաճ շ. 17.

24 Ընդհան, Ֆ. Բրոդելն իր «Միջերկրածովքը և միջերկրածովյան պահանը Ֆիլիպ II-ի դարաշրջանում» մենագրության առաջին (1949 թ.) հրատարակության մեջ «գեղապատմությունը» ներկայացրել է որպես «անշարժ պատմություն», իսկ երկորրդ հրատարակության մեջ (1966 թ.) արդեն «գեղապատմությունը» ներկայացվել է որպես «կառուցվածքային պատմություն»: Ակնհայտ է, որ եզրի նման փոխակերպումը (թերևս՝ կառուցվարանական իմաստափրության ազդեցության ներքո) խոսում է և Ֆ. Բրոդելի պատմասիրության մեջ որոշակի տեղաշարժի մասին:

25 Լ. Փեր, Եօն աւուրուս, Մ.: «Հայկա», 1991, շ. 185.

26 Stéphane F. Braudel, Histoire et sciences sociales: la longue durée, Annales E.S.C., 4, (195), Débats et Combats, pp. 725-753.

27 Ա. Կոնդրատիս (Նիկոլայ Կոնդրատև, 1892- 1938) – ռուս ականավոր տնտեսագետ: Դիմնադիրն է «Կոնդրատկան այիբներ» անվանումն ստացած տնտեսական շրջափուլերի տեսության:

28 Stéphane George Gurvitch (1894-1965) ռուսական ծագումով ֆրանսիական ընկերաբան:

29 Stéphane F. Dosse, op. cit., p. 111.

30 Պ. Սորոկին (Պիտիրիմ Սորոկին, 1889- 1968) – ռուս-ամերիկյան ընկերաբան և մշակութարան: Սոցիալական շերտավիրման և սոցիալական շարժումության տեսությունների հիմնադիրներից մեկը: Ռ. Մերթոն (Robert King Merton, 1910- 2003) – քանագորդ դարի ականավոր ընկերաբաններից մեկը:

հաշվարկման միջոց»<sup>31</sup>: Ժամանակի հղացքն իր տեսական ավարտուն ձևակերպումը ստացավ Ժ. Գուրվիչի 1955 թվականին հրատարակած «Ընկերային դետերմինիզմը և մարդկային ազատությունը» հիմնարար աշխատության մեջ<sup>32</sup>: Այստեղ ընկերային ժամանակը դիտարկվում է իր բազմաչափության մեջ. այն «կարող է լինել կտրված, սառեցված կամ ամրողովին շարժման մեջ՝ ըստ ցանկության»<sup>33</sup>:

Նման ըմբռնմանը Ժ. Գուրվիչը հանգել էր՝ մեկնարկելով «**համբնդիանուր հանրույթների**» (sociétés globales) հղացքից, որոնց ներհատուկ են մի շարք կայուն չափորոշչներ՝<sup>34</sup>: Դրանցից հատկապես կարևոր են երկուսը: Առաջինը հասարակության դիտարկում է ուղղահայաց, երկրորդը՝ հորիզոնական հարթություններում՝<sup>35</sup>: Հորիզոնական հարթության մեջ նաև առանձնացնում էր համակեցական երեք վիճակ՝ «**անսահման փոքրերը**» (infinitement petites), «**միջին կազմությունները**» (corps moyens) և «**համբնդիանուր հանրույթները**» (sociétés globales): Այս վիճակները կարող են գոյություն ունենալ զուգահեռաբար և դրանց համադրությամբ հնարավոր է ստանալ համակեցական ամրողի պատկերը:

Զարգացնելով «ընկերային ժամանակի» իր տեսությունը՝ Ժ. Գուրվիչն առանձնացրել էր ուր ժամանակաշափույթ՝ (1) երկարատև կամ դանդաղութաց (longue durée et au ralenti), (2) պատրամքային կամ հանկարծական (trompe-l'oeil ou surprise), (3) անկանոն (անընդհատ) քարախող (de battement irrégulier), (4) շրջապտույտային (cyclique), (5) ինքն իր մեջ պարապված (retard sur lui-même), (6) դանդաղութաց (en avance sur lui-même), (7) մերք դանդաղ, մերք արագ ընթացող (d'alternance entre retard et avance), և (8) պայրուցիկ (explosif) ժամանակները<sup>36</sup>:

Ֆ. Բրոդելը, մանրազնին հետազոտելով Ժ. Գուրվիչի այս բազմաչափությունը, կառուցեց «պատմական ժամանակի» իր ըմբռնումը: Այն հիմնված է ժամանակի երեք հիմնական չափման վրա՝ **կարճ տևողություն** (court durée) կամ՝ քաղաքական, **միջին տևողություն** (midi durée) կամ՝ տնտեսական և **երկար տևողություն** (longue durée) կամ՝ քաղաքակրթական: Հարկավ, նա լավ գիտակցում էր, որ «գոյություն ունեն ոչ երկու կամ երեք, այլ տասնյակ ենթաժամանակներ, և դրանցից յուրաքանչյուրը կարիք ունի առանձնահատուկ պատմական շարակարգման», ուստիև «Համբնդգրկուն պատմությունը այս գործընթացների արդյունք է»<sup>37</sup>: Ընդ որում, Ֆ. Բրոդելը ժամանակի նման տարրաժամանակները լրացնելով կամ

Պատմական գործընթացների ժամանակային առաջին շերտը՝ «**կարճ տևողությունը**», որը լծորդվում էր «անհատականության և իրադարձության» հետ, ավանդական պատմության կերպն է, այն է՝ «**իրադարձային պատմությունը**» (l'histoire énémentielle): Այն չափվում է տասնամյակներով, որոնց մեջ ներառված են առանձին մարդկանց կենսագրական դրվագները, արարքները կամ

31 P. Sorokin, R. Merton, Social Time: A Methodological and Functional Analysis, The Sociology of Time, Ed. by J. Hassard, New York, 1990, p. 58.

32 Տե՛ս G. Gurvitch, Déterminismes sociaux et liberté humaine, Paris, 1955.

33 F. Braudel, Ecrits sur l'Histoire, p. 119.

34 Կազմաբանական և էկոլոգիական մակարդակը, ընկերային հարացույցները, կուեկտիվ վարքը, ընկերային խորհրդանշները, կուեկտիվ արժեքներն ու զաղափարները և այլն:

35 Տե՛ս F. Braudel, Georges Gurvitch ou la Discontinuité du social, Annales, ESC, 3, (1953), p. 355.

36 Տե՛ս G. Gurvitch, Déterminismes sociaux et liberté humaine, Paris, 1955, p. 39.

37 Փ. Բրօդէլ, Средиземное море..., т. 3, с. 424.

38 Տե՛ս И. Валерстайн, Изобретение реальностей времени-пространства: к пониманию наших исторических систем, «Время Мира», вып. 2, 2001, с. 103.

իրադարձությունները, որոնք եղել են մասնակից կամ ականատես: Այն համաշափ է «անհատականությանը, նրա կյանքի առանձին ոփրմին»: Այլ խոսքով՝ համանման է «ժամանակազրի, ժունապիստի ժամանակաշափին»<sup>39</sup> և, արձանագրված ժամանակի երկար տևողության ծիրում, հանդիսանում է որպես «միկրոպատմություն»<sup>40</sup>: Ընդունելով, կարճ տևողությունը «առավել կամակոր, առավել խարուսիկն է տևողություններից»<sup>41</sup>:

Կարճ տևողության նման ընկալումը Ֆ. Բրոդելը ձևակերպել է նաև որպես «պատմության փոշի»<sup>42</sup>, որը երբեմն լծորդում են «քաղաքական պատմություն» հղացքի հետ՝ միայն այն վերապահումով, որ քաղաքական պատմությունը պարտադիր չէ, որ սահմանափակվի ժամանակի կարճ տևողության կամ իրադարձությունների պատմության վանդակում<sup>43</sup>: Բրոդելյան ժամանակաշափի «միջին տևողությունը» ներառում է տնտեսական ոփրմերը: Այն ընդգրկում է հասարակական կառույցների, ժողովրդագրական զարգացումների արտադրության, ապրանքաշրջանառության, շոկայական հարաբերությունների և այլնի ամբողջությունը, որը համարենի է, ինչպես նշեցինք՝ կոնդրատևյան տնտեսական այլիների հետ, և հիմնականում բնուրագրում է տնտեսական տեղաշարժերը: Այլ կերպ՝ այն կոչվում է «համակցային պատմություն» (l'histoire conjoncturelle): Եթե ավանդական ժամանակաշափի մեջ գործող պատմագետը, ում համար ժամանակը օրերի սուկական հաջորդականություն է, բավարարվում էր մեկ օրվա կամ մեկ տարվա ընդգրկմամբ, ապա «ժողովրդագրական աճերը, աշխատավարձերի ցածրացումները, բանկային տոկոսադրույթների փոփոխությունները, արտադրության հետազոտությունները [...], ապրանքաշրջանառության ճշգրիտ վերլուծությունները և այլն, պահանջում են ժամանակի ավելի տևական ընթացումներ»<sup>44</sup>: Դրանք չափում են հարյուրամյակներով: Ժամանակի այս չափումը համընկնում է տնտեսական և հասարակական «շրջափուլերի» հետ: Սակայն, այն վերապահությամբ, որ այստեղ պատմագետը չպետք է այս երկուար փոխարինի պատմական այլ գործընթացներով, որպիսիք են գիտությունը, տեխնոլոգիաները, քաղաքական հաստատությունները, ճանաչողության մերողները, քաղաքակրությունները, որոնք ունեն կյանքի և զարգացման սեփական ոփրմերը<sup>45</sup>:

Եվ, վերջապես, ժամանակի մյուս չափույթը՝ «երկար տևողությունը»: Այն «անշարժ է կամ գրեթե անշարժ»՝ անկախ քաղաքական կամ ընկերային-հասարակական փոխակերպություններից: Ժամանակի նման չափման մեջ շեշտվում է «կառուցվածքային պատմության» (l'histoire structurelle) այն կերպը, որը «սիրապեսող է երկար տևողության առնչվող բոլոր գործընթացներում»<sup>46</sup>: Ընդունում՝ «դա սուկ քվացյալ անշարժություն է, երկրին շաղկապված մարդկային հանրույթների պատմություն է (la géographie humaine), որը կրում և սնում է նրանց»<sup>47</sup>: Այս ժամանակաշափի հետնախորքի վրա բացվում են ոչ միայն

39 F. Braudel, Ecrits sur l'Histoire, pp. 45-46.

40 Ibid., p. 112.

41 Ibid., p. 46.

42 Փ. Բրոդել, Սредиземное море ..., т. 3, с. 16.

43 Տես F. Braudel, Ecrits sur l'Histoire, p. 46.

44 Ibid., p. 48.

45 Տես Ibidem.

46 Ibid., p. 50.

47 Ibid., p. 24.

անցյալի հետազոտության հնարավորությունները, այլև ապագայի կանխատեսման հեռանկարները: Բացի այդ, ըստ Ֆ. Բրոդելի, «Երկար տևողությունը» բացում էր պատմության և ապագայի այն փոխկապակցական հեռանկարները, ներքին այն կապերն ու առնչությունները, որոնց մասին դեռևս **L. Ֆլեբ** ու **Մ. Բլիկ** էին խոսում: Այս ժամանակաշափի շնորհիվ պատմությունը տարանջատվում է այլ կրթանքներից, քանի որ ժամանակի երկար տևողության մեջ հնարավոր է ինքնահաստատվել որպես հետազոտական առանձին բնագավառ<sup>48</sup>:

Այս առումով պատմագիտության առաջ ծառանում է մեկ այլ կարևոր հիմնախնդիր՝ բազմաշափությունից անցում կատարել դեպի «միասնական պատմական տևողության և տեքստի ձևակերպումը»<sup>49</sup>: Խոսքը բոլորովին էլ հետազոտության առարկայի կամ մեր հետաքրքրության շրջանակների ուղղակի ընթայնման մասին չէ<sup>50</sup>, այլ պահանջում է «ընտելանալ այն ժամանակին, որն ընթանում է դանդաղ, այնքան դանդաղ, որ թվում է անշարժ», որովհետև միայն այդ դեպքում է հնարավոր «ազատազրկել իրադարձությունների գերությունից, որպեսզի հնարավոր լինի կրկին դրանց վերադառնալ և դիտարկել բոլորովին այլ հայացընկ»<sup>51</sup>:

Ժամանակի վերոհիշյալ երեք չափույթների բնականոն համադրության համար Ֆ. Բրոդելը առաջադրում էր «չափազանց երկար տևողության» (le temps tres long) հղացքը: Այս չափումը, «եթե այն գոյություն ունի, ապա պետք է որ լինի **իմաստունների ժամանակը** (le temps des sages)», որի ծիրում պատմագետը վերացարկում և վերակառուցում է պատմության եռաչափ ըմբռնումը<sup>52</sup>: Եվ միայն այս ժամանակ հնարավոր կլինի պատմությունը հասկանալ «հիրավի համընդգրկում կերպով», երբ «պատմության բոլոր հարբակները, դրանց բոլոր բազմազանությունները, պատմական ժամանակի բոլոր պայքարությունները մեր առջև կհառնեն՝ վերընճյուղվերով այս կիսանշարժ խորությունից, ծանրության կենտրոնից, որի շուրջ պտտվում է ամեն ինչ»<sup>53</sup>: Պատմության այս չափումը միտում ունի միավորելու ողջ մարդկությանը, ի մի բերելու նրա ծավալումը ժամանակի և տարածության մեջ: Միտում ունի նրան համախմբելու իրու «տիեզերական միավոր»: Համաձայն Ֆ. Բրոդելի՝ «չափազանց երկար տևողության ժամանակը» մարդկության առաջընթացի «հնարավոր ուղիներից մեկն է միայն»<sup>54</sup>:

Այսպիսին է Ֆ. Բրոդելի պատմական ժամանակի կառույցը: Այն հույժ արդյունավետ «գործիք» է պատմությունը համակողմանիորեն և համաշափ ըմբռնելու համար՝ պարագելով նրա բոլոր կարևոր հարթությունները՝ մասնավոր դեպքերից մինչև համընդիանուր իրադարձություն, առանձին անհատից մինչև հանուր մարդկությունը:

Պատմական ժամանակի երկար տևողության հետնախորքի վրա էլ Ֆ. Բրոդելը կառուցում է «ժամանակի քաղաքակրթական չափույթը», մի հարացույց, որը լրացուցիչ ազդակ և բովանդակություն է հաղորդում պատմության

48 Տես **К. А. Агиэрре Рохас**, Критический подход к истории французских «Анналов», М., 2006, с. 113.

49 **Ա. Ստեփանյան**, **Ե. Մարգարյան**, անդ, էջ 38:

50 Տես **F. Braudel**, Ecrits sur l’Histoire, p. 54.

51 *Ibidem*.

52 Տես **Ibid.**, p.76.

53 **Ibid.**, p. 54.

54 **Ibid.**, p. 81.

«համընդգրկուն» ըմբռնմանը:

## 2. «Քաղաքակրթություն» հասկացությունը և նրա չափորոշիչները

«Քաղաքակրթություն» հասկացության ըմբռնումը և նրա տեսարանումը ծագել ու նախապատրաստվել են արևմտաեվրոպական իմաստափրական և պատմագիտական մտքի համաձիրում: Ընդ որում, այն սկզբնապես ներհակ էր «զուտ պատմական» ըմբռնումներին, սակայն արդեն 19-րդ դարի վերջերից դառնում է պատմության հետազոտման մերոդարանական հենքերից մեկը: Իսկ արդեն 20-րդ դարի սկզբներին ձևափորվում են «քաղաքակրթություն» հետաքրքրությունը տեսարանման երեք՝ գերմանական, անգլիական և ֆրանսիական պատմագիտական դպրոցները:

Քաղաքակրթության տեսարանման նոր ալիքն ի հայտ եկավ Երկրորդ աշխարհամարտի ավարտին և «սառը պատմերազմի» սկզբնավորման ժամանակաշրջանում, երբ կրկին քրջանառության մեջ դրվեցին իշխանության և ազգային շահերի հիմնախնդիրները<sup>55</sup>: Ուշագրավ է, որ նույն այս ժամանակներում էլ աննալականների թեմատիկան ընդլայնվելով՝ դուրս էր եկել ընկերային-տնտեսական սահմաններից, ուստիև առկա էր պատմագիտական նախսկին հարացույցի վերաբարձացման հիմնախնդիրը: Դրա արձարծումը շուտով փոխադրվեց հանդեսի խորագրի մեջ՝ նրան տալով «Տարեկրություններ, տնտեսություններ, հասարակություններ, քաղաքակրթություններ» (Annales: Économiques, Sociétés, Civilisations) անունը: Անշուշտ, «քաղաքակրթություն» եզրի հայտնվելը հանդեսի խորագրում ամենահին էլ պատահական չէր, քանի արտահայտում էր աննալականների պատմագիտության վերաբարձացման ձգտումը: Եվ այն շուտով վերածվեց պատմատեսական հիմնարար ուղղության, որում մեծ էր Ֆ. Բրոդելի ներդրումը:

Հարկավ, Ֆ. Բրոդելը քաղաքակրթական իր տեսությունը կառուցելիս մեկնարկում էր դպրոցի հիմնադիր-ուսուցիչների, մասնավորապես Լ. Ֆերի պատմատեսությունից: Ըստ Լ. Ֆերի՝ պատմագիտությունը պետք է ընդգրկի մարդկային համակեցության զանազան շերտեր, ինչպիսիք են ընկերային կառույցը, տնտեսությունը, քաղաքականությունն ու ճշակութահոգեբանությունը: Համաձայն նրա՝ հիշյալ շերտերն իրենց հերթին ներկայացնում են չորս ենթաշերտ: Այսպես, ընկերայինը ներառում է այն ամենը, ինչն առնչվում է մարդկանց կյանքին՝ կենսակերպ, բնակչության վերաբանություն (ընտանիք, ազգակցություն, սեռատարիքային հարաբերություններ), առողջություն, հիգիենա, խմիչք, սնունդ, հազուստ, աշխատանք, զվարճանք, պաշտպանվածություն և այլն: Տնտեսականը ներառում է արտադրությունը՝ շուկա, գներ, պահանջարկառաջարկ, արտադրանքի և ծառայությունների փոխանակում, տեխնիկա, հաղորդակցության համակարգ, տնտեսության կազմակերպում և այլն: Քաղաքական ենթաշերտի մեջ ներառվում են մարդկանց միջև իշխանական-հաստատութենական փոխարարքերությունները, այն է՝ սովորույթները, նորմերը, իրավունքը, իշխանությունը, քաղաքացիական կազմակերպությունները, կուսակցությունները, հասարակական շարժումները և այլն: Իսկ մշակութահոգեբանական ենթաշերտը

55 Տե՛ս P. Rich, Civilizations in European and World History: A Reappraisal of the Ideas of Arnold Toynbee, Fernand Braudel and Marshall Hodgson, The European Legacy, 5, (2000), p. 341.

ներառում է հոգևոր կյանքի ոլորտն իր արժեքային ողջ համալիրով։ Հարդյունս այս չորս ենթաշերտի փոխհարաբերության և փոխազդեցության՝ ձևավորվում է համընդգրկուն մի համակարգ, որը կարելի է ձևակերպել իրու «քաղաքակրթություն»։ Ուստի «քաղաքակրթություն», ըստ Լ. Ֆերի, «Եյութական և հոգևոր, բանական և կրոնական այն համահավասարակշիռ ուժն է, որը ներգործում է մարդկանց գիտակցության վրա ժամանակի տվյալ հատվածում, տվյալ տարածքում»<sup>56</sup>։

Չնայած «քաղաքակրթություն» եղի՝ Լ. Ֆերի նշանակալից ճշգրտումներին, այն, այդուամենայնիվ, դեռևս ամբողջական չէր։ Դրա համալրմանն էլ միտված էր բրոդեյան հետազոտական ծիգը։ «Քաղաքակրթություն» հասկացությանը Ֆ. Բրոդելն անդադարձել է դեռևս իր «Միջերկրածովքը և միջերկրածովյան ավագանը Ֆիլիպ II-ի դարաշրջանում» մենագրության նախնական տարբերակներում (1947 և 1949 թթ.), որի տեսական ամփոփումն իրականացվել է նախ՝ «Քաղաքակրթությունների պատմություն։ անցյալը մեկնարանում է ներկան»<sup>57</sup> հոդվածի և ապա՝ «Քաղաքակրթությունների քերականություն»<sup>58</sup> և «Նյութական քաղաքակրթությունը, տնտեսությունը և կապիտալիզմը, XV-XVIII դդ.» մենագրությունների մեջ։

Բայց «քաղաքակրթություն» հղացքը ժամանակի երկար տևողության համաձիրում դիտարկելուց առաջ Ֆ. Բրոդելը նախ՝ փորձում էր պարզել «քաղաքակրթություն» հասկացության բովանդակային փոփոխությունները գիտության մեջ, քանի որ դրա նկատմամբ ո՞չ մոտեցումները, ո՞չ էլ ըմբռնումները բոլորովին էլ նույնական չէին։ Այս կապակցությամբ հեղինակն առաջարկել է «ո՞րն է քաղաքակրթության ստույգ պատմությունը»<sup>59</sup> հարցադրումը, որին հնարավորինս համապարփակ պատասխան տալու համար Ֆ. Բրոդելը «քաղաքակրթություն» եղրը քննարկում էր երկու ուղղությամբ։ **նախ՝** վերջինս «իր խսկ ակունքների», **ապա՝** «մշակույթ» հասկացության ըմբռնումների համատեքստում։ Նա իր հետազոտությունը կառուցել է ժամանակի երկար տևողության հետնախորքում<sup>60</sup>, որպեսզի հնարավոր լինի ըմբռնել քաղաքակրթությունը և մշակույթը «իրենց կենդանի իմաստների շրջանակներում»։ Միտումն է՝ հետևել դրանց փոխակերպությունների ընթացքին արդի դարաշրջանի պատմական գիտակցության դիտանկյունից<sup>61</sup>։

Ֆ. Բրոդելը քաղաքակրթություն եղրը նախևառաջ դիտարկում է «բանական, տեխնիկական, բարոյական և ընկերային զարգացումների պարզեցված հասկացություններից»՝ մինչ վերջինս կոտորակումը և տարասեռ ենթահմաստների ու սահմանումների ի հայտ գալը<sup>62</sup>։ Այս առումով ուրվագծվում են մոտեցման

56 **Л. Февр**, указ. соч., с. 282.

57 F. Braudel, Ecrits sur l'Histoire, pp. 255-314.

58 F. Braudel, Grammaire des civilisations, Paris, 1993. Զեօնարկելով այս դասագիրքը՝ Ֆ. Բրոդելը նախատեսում էր արդի պատմությունը և համաշխարհային պատմությունը համադրենով՝ ներդնել դպրոցական դասավանդան ծրագրերում։ Սակայն նրա բարեփոխական ծրագրերը ծախողվում են ֆրանսիական աշերի ու ձախերի համադաշն ընդդիմության պատճառով, թեև Ֆ. Բրոդելն այն քչերից էր, ու չէր գտնվում քաղաքական ոչ մեկ, ոչ էլ մյուս ծամբարում։ Հարաբերությունները մասնավորապես սրվում են նախազան ժ. Պոնվիդոյի պատմագիտական ծայրահետ պատկերացությունների հետևանքով, ով անհարգալի վերաբերմունք ուներ այլոց պատմության հանդեպ։

59 F. Braudel, Ecrits sur l'Histoire, p. 258.

60 Ibidem.

61 Ibid., p. 265.

62 Ibid., p. 259.

երկու չափումներ՝ **եզակի** և **հոգնակի**<sup>63</sup>: Եզակի չափումն ի հայտ է եկել 18-րդ դարում: Դրանում քաղաքակրթությունը ներկայանում է «իրքն հասարակական առաջընթացի ցուցիչ»՝ վայրենությունից դեպի լուսավոր ապագա<sup>64</sup>: Խսկ հոգնակի չափումն ի հայտ է եկել արդեն 19-րդ դարի կեսերից, երբ քաղաքակրթությունը դադարում է համարվել «զուս բարոյական և բանական արժեք»<sup>65</sup>: Համաձայն վերջինիս՝ պատմության ընթացքում քաղաքակրթությունները (և մշակույթները) շատ են եղել և կան՝ թե՝ անցյալում ու թե՝ ներկայում: Չնայած որոշ նմանություններին, դրանք ունեն իրենց առանձնահատկություններն ու տարրերությունները:

Հընթաց այս ամենի՝ «քաղաքակրթություն» եզրի բովանդակությունը աստիճանաբար բարդանում և ձեռք էր բերում անորոշության ինչ-ինչ տարրեր: Ի մասնավորի՝ դժվարանում էր «քաղաքակրթություն» և «մշակույթ» հասկացությունների ճշգրիտ տարարածանումը: Այս նպատակով Ֆ. Բրոդելը առաջարկել է «չորս քայլանոց» իր մոտեցումը, հուսալով, որ դա հնարավորություն կտա ներկայացնել քաղաքակրթությունների պատմությունը՝ որպես «կարճատև պատմությունների խաչաձևմամբ՝ երկարաժամյա պատմական հեռանկար ստեղծելու հնարավորություն»<sup>66</sup>: Նա մշակում է «քաղաքակրթություն» եզրի սեփական բառարանը՝ կատարելով գոյություն ունեցող հասկացությունների լրացումն ու վերարժևորումը, մտեցում, որը հնարավորություն է տալիս ձևակերպել «քաղաքակրթություն» ըմբռնումը՝ դրա մեջ շեշտադրելով իրականության ավելի բազմաշերտ կառույցը<sup>67</sup>:

Այդ ծրագրի առաջին խնդիրն էր «**հրաժարումը** որոշ ավանդական ըմբռնումներից՝ անկախ դրանց լավ կամ վատ լինելուց»: Երկրորդը՝ քաղաքակրթության չափորոշչների հստակեցումը: Երրորդը՝ նրա հմաստների բացահայտումը հումանիտար տարրեր գիտությունների առնչությամբ: Եվ չորրորդը՝ այդ ամենի ընդհանրացումը<sup>68</sup>:

Դրանով հանդերձ պատմագետը **հրաժարվում** էր որոշ լեզվական կարծրակերպերից, չխսելով այլս քաղաքակրթության (ինչպես նաև մշակույթի) որպես օրգանիզմի կամ անհատականության մասին: Հրաժարվում էր քաղաքակրթությունը ուղղագիծ (միայն ծագումի, զարգացումի և մահացման) համատեքստում դիտարկելուց, որը չափազանց պարզեցնում է այն<sup>69</sup>: Հրաժարվում էր նաև քաղաքակրթությունը «ինքնարավ, վակ համակարգ ներկայացնելուց, ինչպես նաև դրա ցանկացած շրջափուլային (ցիկլային) մեկնարանության բացարձականացումից»<sup>70</sup>: Անշուշտ, բոլոր այս հրաժարումները կամ բացասումները պետք էր իրականացնել շատ զգուշությամբ. քաղաքակրթություն (կամ մշակույթ) հասկացության մեջ պետք էր ընդգրկել բոլոր հնարավոր մեկնարանությունները, որպեսզի հնարավոր լիներ ավելի պարզ մշակույթներից անցում կատարել **մեծ քաղաքակրթություններին (major civilisations)**: Եվ, որ կարևոր է՝ մեծ քաղաքակրթությունները տարրաժամնել ենթադրակարթու-

63 Տես **Ա. Ստեփանյան, Ե. Մարգարյան**, անդ, էջ 39:

64 Անդ, էջ 39:

65 F. Braudel, Grammaire des civilisations, p. 37.

66 *Ibid.*, p. 288.

67 Տես **M. Aymard**, Braudel enseigne l’Histoire, in F.Braudel, Ecrits sur l’Histoire, p. 17.

68 Տես **F. Braudel**, Ecrits sur l’Histoire, p. 289.

69 *Ibidem*.

70 *Ibidem*.

թյունների, որոնց բաղադրիչներն են պետությունները, ժողովուրդները, ազգերը: Այնուհետև՝ հարկ էր միմյանց շաղկապել այդ փոքր տարրերը և հետևել դրանց զարգացումներին:

Հոյից կարևոր էր նաև **պատմության և հումանիտար գիտությունների միջև երկխոսության** հիմնախմնիքը և այս համատերսում էր միայն հնարավոր խոսափել «մշակույթ» և «քաղաքակրթություն» ստորոգությունների սոսկական հակադրումից, քանի որ «պատրանքային է այս երկուար միմյանցից մեկուսի դիտարկելը»: Ուստի՝ «մի շարք հաջորդական երկխոսությունների» շնորհիվ է միայն հնարավոր դառնում պատմության տարածք ներքերել հումանիտար գիտությունների տարածեռ արդյունքները և ընթանել «քաղաքակրթություն» և «մշակույթ» ստորոգությունների խորքային իրողությունները<sup>71</sup>:

Այստեղից էլ բխում էր Ֆ. Բրոդելի հաջորդ՝ **լճդիանրացնող** քայլը: Այն միտված էր ցույց տալու, որ քաղաքակրթության տիպարանության, բռվանդակության և առանձնահատկությունների վերաբերյալ հակասական ընկալումները մեծ մասամբ պայմանավորված են պատմական, իմաստափրական, ընկերաբանական, մշակութաբանական մոտեցումների՝ միմյանցից մեկուսի դիտարկմաբ:

Այս մոտեցումով գիտական գրականության մեջ առանձնացվում էին քաղաքակրթության **տարածքային** (Եթնիկական և միջէթնիկական), **փուլային** (նախնադարյան, նախաարդյունաբերական, արդյունաբերական, հետարդյունաբերական և այլն), **զարգացումային-ֆորմացիոն** (ստրկատիրական, ավատատիրական, կապիտալիստական, սոցիալիստական), **լոկալ** (ըստ աշխարհագրական տարածքի՝ եվրոպական, ասիական, մերձավորարևելյան և այլն), **պատմամշակութային և ժամանակագրական** (շումերական, չինական, անտիկ և այլն), **կրոնական** (քուրդայական, քրիստոնեական, իսլամական և այլն) և այլ կերպերը<sup>72</sup>: **Առ այդ՝** անհրաժեշտ էր հստակ որոշարկել «քաղաքակրթության» տարարնույթ մոտեցումների հիմնական հատկորոշչները, քանի առկա քազմականությունն ավելի շատ խանգարում էր, քան թե նպաստում հիմնախնդրի լուծմանը:

Ուստի, Ֆ. Բրոդելն առանձնացնում էր աշխարհագրությունը, ընկերաբնությունը, տնտեսությունը և կոլեկտիվ մտակեցվածքները, որովհետև «չնայած հումանիտար գիտությունների հետ պատմության երկխոսության նկատառմանը՝ քաղաքակրթությանը կարելի էր ավելի շատ մոտեցումներ ներկայացնել»<sup>73</sup>: Այս քաղադրիչների տարրեր լծորդումների շնորհիվ ստեղծվում էր համահավասարակշիռ քաղաքակրթական միջավայրը՝ իր առանձնահատկություններով ու ինքնությամբ:

Առաջինի դեպքում՝ յուրաքանչյուր քաղաքակրթություն (անկախ նրա տարածական ընդգրկումներից) տեղայնացվում է քարտեզի վրա: Նրա էական կողմը կախվածությունն է **աշխարհագրական դիրքից** (խոչնորությեր կամ առավելություններ): Այս պարագայում խոսել քաղաքակրթության մասին՝ նշանակում էր խոսել «տարածությունների, հողերի, ոելիեֆների, կիմաների, բնական ռեսուրսների, բուսական ծածկույթի, կենդանական աշխարհի մասին: Եվ այն ամենի, որոնք բխում են դրանցից: Այն է՝ «գյուղատնտեսությունը,

71 Ibid. pp. 291, 294, 297.

72 Տես Լ. Ս. Վասիլ'և, Исторические этапы цивилизации (традиции цивилизации), «Цивилизация и исторический процесс», М., 1982, с. 28-29.

73 F. Braudel, Grammaire des civilisations, p. 40.

անասնապահությունը, սնունդը, տները, հագուստը, հաղորդակցությունները, արդյունաբերությունը... Սի բեմահարթակ, որ խաղում են այս չափարտփող թատերախաղերը»<sup>74</sup>: Ասվածի շնորհիվ ուրվագծվում էր քաղաքակրթության տարածական տիպարանությունը՝ ըստ որոշակի աշխարհագրական-տարածքային գոտիների: Միջավայրի ազդեցությամբ ձևավորված քաղաքակրթություններից կարելի է առանձնացնել, օրինակ, «գետային քաղաքակրթությունները» (հնդկական, չինական, միջագետքյան), «ծովային քաղաքակրթությունները» (փյունիկյան, հունական, հռոմեական), «անապատային քաղաքակրթությունները» (արաբական, մոնղոլական) և այլն, որոնց պարագայում անհնար է հստակ որոշարկել քաղաքակրթության սահմանները: Մասնավորապես, երբ տվյալ աշխարհագրական տարածքի մեջ ներառված են քաղմարիվ «մշակութային գոտիներ», որոնցում քաղաքակրթությունն ավելի բարդ կառուցվածք է ձեռք բերում<sup>75</sup>:

Երկրորդ դեպքում՝ «գոյություն չունի ոչ մի քաղաքակրթություն առանց այն հասարակության, որը նրա կրողն է»: «Հասարակությունը չի կարող քաղաքակրթությունից տարանջատ լինել. երկուսն էլ վերաբերում են միևնույն իրականությանը»<sup>76</sup>: **Հասարակությունը** քաղաքակրթության նյութական անդամանությունն է: Իսկ քաղաքակրթությունն այն հիմնարար մարտկոցն է, որով սնվում և կարգաբերվում են հասարակությունները:

Հայտնի է, որ որոշ ընկերաբանական տեսություններում քաղաքակրթության բնորոշ միջավայրը է համարվում քաղաքային կյանքը: Նրա բացակայության դեպքում, ըստ դրանց հեղինակների, կարելի է խոսել միայն մշակույթների մասին: Նման մոտեցման վերջին խոչընթերկայացուցիչը **O. Շպենգլերն**<sup>77</sup> էր: Քաղաքային կյանքը դեպի իրեն է ձգում և իր մեջ է պարառում շրջակա մշակույթները: Այլ կերպ ասած՝ քաղաքակրթությունները հասարակությունների պահեստավորումներն են, այն առումով, որ ցանկացած հասարակություն կախված է աշխարհագրական, տնտեսական, տեխնոլոգիական, կենսաբանական, ժողովրդագրական այլ իրողություններից: Ուստի քաղաքակրթությունները կարելի է տիպարանել նաև **ըստ հասարակական կառուցվածքի**: Այստեղից էլ երրորդ քաղաքությանը՝ **քաղաքակրթություն-տնտեսություն** փոխարարելությունների հիմնախնդիրը, երբ «նյութական և կենսաբանական պայմաններն անվերջորեն ներազրում են քաղաքակրթությունների ճակատագրի վրա»<sup>78</sup>: Ժողովրդագրական, կենսաբանական, տեխնոլոգիական ընքոնումները չափազանց կարևոր են քաղաքակրթությունները զանազանելու և որոշարկելու համար: Դրանցով են մողելավորվում քաղաքակրթությունները՝ ըստ տնտեսական կառույցների, օրինակ, նախարարյունաբերական, արդյունաբերական, հետարյունաբերական<sup>79</sup>: Ընդ որում՝ **Ֆ. Բրոդելը** ժխտում էր հասարակության ուղղագիծ զարգացման տեսությունը, նկատի ունենալով նախ և առաջ՝ մարդկության զարգացման դարաշրջանների

74 Ibid. p. 41.

75 Ibid. p. 43.

76 Ibid. p. 44.

77 O. Շպենգլեր (Oswald Arnold Gottfried Spengler, 1880-1936) - գերմանացի ականավոր փիլիսոփա և մշակութաբան: Յիմնադիրն է «Ինքնարավ քաղաքակրթությունների» տեսության: «Պատմաֆիլիհոսփայական հայացքները մասնավորապես վառ են արտահայտվել նրա նշանավոր «Եվրոպայի մայուամուտը» (իրականում «Արևմտայի մայակնուտը») երկասոր կորողային աշխատության մեջ»:

78 F. Braudel, Grammaire des civilisations, p. 50.

79 Ibid. pp. 52-53.

վերաբերյալ **Զ. Վիկոյի, О. Կոնտի, Կ. Մարքսի**<sup>80</sup> և այլոց մոտեցումները: Ֆ. Բրոդելի դիտանկյունից՝ կարևոր է ոչ միայն անընդհատությունը, այլև ընդհատությունն իրու պատմության գործընթացի անկապտելի չափում: Այս կապակցությամբ նա առաջադրում է պատմության բազմազան միտումների, ոիթմերի և կիսաուիճմերի կարևորան անհրաժեշտությունը<sup>81</sup>:

Եվ, վերջապես, քաղաքակրթության տիպարանության մյուս կարևոր բաղադրիչն է **մտակեցվածքների պատմությունը**, որի ծիրում հնարավոր է դառնում նախորդ երեքի համադրման հնարավորությունը: Քանի որ յուրաքանչյուր դարաշրջան ունի իրեն հատուկ մտածական համակարգը (որն առավել քիչ զգայուն է ժամանակի ճնշումների նկատմամբ), ուստի հնարավոր է քաղաքակրթությունը դիտարկել ժամանակի երկար տևողության համատեքստում: Որպես մտակեցվածքային իրողություն՝ կարելի է դիտարկել ծեսերը, սովորույթները, արվեստի ստեղծագործությունները, գրավոր հուշարձանները, կրոնը և այլն: Ասվածը հնարավորություն է տալիս քաղաքակրթությունները որոշարկել ըստ հումանիտար արժեքների՝ դրանք արտահայտող գիտությունների հետ ունեցած փոխառնչությունների համատեքստում:

Քաղաքակրթական այս քաղադրիչների միակցությունները տարբեր միջավայրերում, տարբեր դարաշրջաններում խիստ առանձնահատուկ են: Դրանց շփման կետերում «անխուսափելիորեն գոյանում են փոխչփումի և փոխներգործության դաշտեր»<sup>82</sup>: Դա հնարավոր է շնորհիվ մշակութային արժեքների «ճամփորդությունների», որոնք «հաճախ հաստատվում են որևէ տեղում և շարունակում իրենց ուղին (տարվա կամ հարյուրամյակների տևողությամբ)՝ երբեք շդադրեցնելով իրենց շրջապտույտը, մոռացվում են և կրկին վերածնվում»<sup>83</sup>:

Քաղաքակրթական փոխարարությունների համատեքստում հետաքրքիր է դրանց փոխադարձ մերժման և, ընդհակառակը, համերաշխության կիմնախնդիրը: Ըստ Ֆ. Բրոդելի՝ քաղաքակրթությունները «կարող են լինել հանդուրժող և առատաձեռն ու դրա հետ մեկտեղ նաև՝ ներփակ ու անրարեհամբույր. նրանք տարփոխվում են միմյանց այցելելով, խաղաղասեր են և, միևնույն ժամանակ՝ ուազմատենչ, զարմանալիորեն կայուն ու նաև շարժուն»<sup>84</sup>: Տվյալ քաղաքակրթության կայունությունը կամ կենսունակությունը մեծ մասամբ բխում է նման տարփոխման ունակությունից. «Դիմումիայի երևույթը կարող է տվյալ քաղաքակրթության կենսունակության և առանձնահատկության հուսայի փորձաքարը լինել»<sup>85</sup>: Ընդ որում՝ քաղաքակրթությունների թե՛ երկխոսությունը և թե՛ միմյանց հակադրումը կարող են ձգվել ժամանակի երկար տևողության մեջ: Դրանք կարող

80 **Զ. Վիկո** (Giovanni Battista (Giambattista) Vico or Vigo (1668 –1744) – իտալացի նշանավոր փիլիսոփա, արդի պատմության փիլիսոփայության, ինչպես նաև մշակութային մարդաբանության և ազգագրության հիմնադիրը: **Օ. Կոնտ** (Isidore Marie Auguste François Xavier Comte, 1798-1857) – ֆրանսիացի փիլիսոփա և ընկերաբան, դրավագության (առզատականության) իրու ինքնուրույն գիտության հիմնադիրը: **Կ. Մարքս** (Karl Heinrich Marx, 1818 - 1883) - գերմանացի փիլիսոփա, ընկերաբան, տնտեսագետ, քաղաքական ժուռնալիստ, հասարակական գործիչ: Նրա աշխատություններում արժարժված փիլիսոփայական, ընկերաբանական, տնտեսագիտական, սոցիալ-քաղաքական հայեցակազմերի հիմնա վկան հետազոտում ստեղծվել է «մարքսիզմ» անվանումը սուսած ուսմունքը, ծավալվել են կոմունիստական և սոցիալիստական շարժումները:

81 Տե՛ս **Ա. Գրաբսկու**, սովորությունը, 184.

82 **Ա. Ստեփանյան**, **Ե. Մարգարյան**, անդ, էջ 39:

83 **Փ. Բրոդել**, Համաշխառությունների պատմությունը, տ. 2, ս. 593.

84 Տամ же, ս. 589.

85 **F. Braudel**, Ecrits sur l'Histoire, p. 294.

են տեղի ունենալ ինչպես ինքնարերական ընթացքով, այնպես էլ գիտակցված<sup>86</sup>: Բոլոր դեպքերում, այդ «լայնածավալ շրջապտույտը երեք չի դադարում»<sup>87</sup>: Այս դեպքում ավելի հստակ է դառնում քաղաքակրթության և ժամանակի երկար տևողության համընկնումը, քանի որ քաղաքակրթություններից «յուրաքանչյուրը և բոլորը (միասին վերցված) մեզ ներառում են հսկայական պատմական շարժման, ժամանակի չափազանց երկար տևողության մեջ»<sup>88</sup>: Ուստի կրկնենք մեկ անգամ էլ՝ քաղաքակրթությունները լիովին ընբռնելի են միայն ժամանակի երկար տևողության ծիրում<sup>89</sup>:

Սակայն, համընկնելով բրոդեյան «երկար տևողության» հետ՝ քաղաքակրթությունը, այնուամենայնիվ, չի նույնանում դրան, այլ ընդամենը վերջինիս բազմաթիվ չափույթներից մեկն է: Ժամանակի երկար տևողությունը ներառում է բազմաթիվ քաղաքակրթություններ՝ քե՛ տարածամանակյա և քե՛ համաժամանակյա հարբույթյուններում: Ժամանակի շրջանակներում դրանք միավորվում են իրենց բազմազանություններով հանդերձ<sup>90</sup>: Այստեղից հետևություն՝ «չկա մեկ համընդգրկուն և անկատի օրենք կամ սկզբունք, որով կարելի լիներ բացատրել բոլոր քաղաքակրթություններն ու պատմությունն ընդհանրապես»<sup>91</sup>:

Ֆ. Բրոդելը քաղաքակրթության և դրա հիմնարար քաղադիչների զանազան լծորդումների շնորհիվ պատմության տիրույթն ավելի ընդգրկում դարձրեց: Դա պահանջում էր նոր հետազոտական մեթոդաբանություն և աշխատանք՝ համարելու «մեկնարանության տարրեր համակարգերը, որոնք շաղկապված են միմյանց»<sup>92</sup>: Չնայած Ֆ. Բրոդելը խոսափում է «քաղաքակրթություն» ստորգության վերաբերյալ որևէ կոնկրետ սահմանում տալուց, այնուամենայնիվ, ի մի բերելով հեղացի վերաբերյալ նրա զանազան ձևակերպումները՝ ստանում ենք հետևյալ պատկերը. «Քաղաքակրթությունը մշակված աշխարհագրական տարածք է, որին մարդիկ և պատմությունը տվել են որոշակի կառուցիկություն»<sup>93</sup>, տարածք, որով «որոշարկվում են նրա բնախոսական (ֆիզիոլոգիական) հնարավորությունները և պայմանավորում զարգացման խիստ սահմանները»<sup>94</sup>: Ընդ որում, քաղաքակրթությունը չի սպառվում միայն ազգագրական ընբռնումների շրջանակներով, այլ ներկայացնում է «տարածական-համակեցական գոտիներ, որոնք մի կողմից մարդկանց թելադրում են նրա գոյության պայմանները, մյուս կողմից՝ մշակման ենթարկվում նրանց ստեղծագործ ճիգերով»<sup>95</sup>:

Այլ խոսքով՝ «Քաղաքակրթությունը որոշակի աշխարհագրական և մշակութային տարածքի մեջ պարապած», «որոշակի հասարակական կարգի», «տնտեսական կենսակերպի» և «կոլեկտիվ հոգեբանության (մտակեցվածքի)» համարեկան-երկխոսային ամբողջությունն է, որը ծավալվում է պատմության ամենաերկար տևողության համաժիրում: Այս առումով՝ «քաղաքակրթության

86 Տե՛ս F. Braudel, Grammaire des civilisations, p. 63.

87 F. Braudel, Ecrits sur l’Histoire, p. 293.

88 Ibid. p. 302

89 Տե՛ս F. Braudel, Grammaire des civilisations, p. 67.

90 Այստեղ բրոեխան «Երկար տևողության» հեղացի համընկնում է Կ.Յասպերսի «առանցքային ժամանակի» հեղացի հետ: Ավելի մանրամասն տե՛ս Կ. Յասպերս, Смысл и назначение истории, М., 1991.

91 Ա. Ստեփանյան, Ե. Մարգարյան, անդ, էջ 39:

92 F. Braudel, Ecrits sur l’Histoire, p. 293

93 Փ. Բրոդել, Средиземное море..., т. II, с. 605.

94 Տամ же, с. 608.

95 Տամ же.

պատմությունը հանուր պատմությունն է, բայց վերցված որոշակի հեռանկարում, դիտարկված մաքսիմալ հնարավոր ժամանակագրական տիրությում՝ պատմական և մարդկային գործուների համակցումների հետնախորքի վրա»: Ընդ որում՝ տվյալ քաղաքակրթության առանձնահատկություններն ընկալելու համար հարկ է «անընդհատ մոտեցում՝ նրա կոնկրետ իրադարձություններին և կառույցներին, աշխարհագրական միջավայրին և ռեսուրսներին, հասարակության տիպարանությանը և մտակեցվածքներին, մշակույթին և կրոնին, արվեստին և հոգեբանությանը: Եվ այդ ամենը՝ կոնկրետ ժամանակի (եռաշափ) չափույթի մեջ»<sup>96</sup>:

Այսպիսով՝ կարելի է նշել, որ Ֆ. Բրոդելի քաղաքակրթությունների տեսությունը, ըստ Էության, նախորդ հետազոտողների (և մասնավորապես՝ Լ. Ֆերի և Մ. Բլոկի) փորձառնության հստակ և հետևողական զարգացումն էր: Այն հաճագեցրեց պատմության նոր ըմբռմանը, որը հայտնի է «բրոդելյան» անվամբ: Նա քաղաքակրթությունների տեսության մեջ նոր մեկնակետ էր վերցնում՝ նյութական քաղաքակրթության հղացքը, առաջադրելով կիմնախնդրի նոր լուծում, որը ի հայտ էր եկել դեռևս «մշակույթ» և «քաղաքակրթություն» ստորոգությունների զանազանման և համադրման դիտանկյունների քննարկման ժամանակ:

### 3. Նյութական քաղաքակրթությունը և նրա չափորոշիչները

Ֆ. Բրոդելի մշակած քաղաքակրթությունների պատմության մեջ առանձնահատուկ տեղ ունի «նյութական քաղաքակրթություն» հետացը: «Համընդգրկուն պատմություն» և «պատմության երկար տևողություն» ստորոգությունների լույսին ներքո նրան հաջողվել է մարդկանց ընկերային կյանքը և համակեցությունը դիտարկել արտադրության կարևոր դրսուրումներից մեկի՝ նյութական քաղաքակրթության դիտանկյունից: «Ժամանակի երկար տևողությունը և քաղաքակրթությունը՝ այս երկու նախընտրելի ստորոգությունները, իրենց հերթին պահանջում են լրացուցիչ դասակարգում՝ ներհատուկ բոլոր հասարակություններին, որոնք գոյություն ունեն համատեղ»<sup>97</sup>: Համաձայն պատմագետի՝ ասվածն ավելի քան վերաբերում է Արևմտյան Եվրոպային՝ սկսած XV դարից:

Քաղաքակրթության այս տարատեսակի մանրակրկիտ դիտարկումը Ֆ. Բրոդելն իրագործել է իր «Նյութական քաղաքակրթությունը, տնտեսությունը և կապիտալիզմը XV-XVIII դր.»<sup>98</sup> կորողային մենագրության մեջ: Վերջինիս ձեռքբերումներն իրենց սեղմ ընդհանրացումն են ստացել հեղինակի վերջին՝ «Ֆրանսիայի ինքնությունը»<sup>99</sup> մենագրության մեջ: Հիշենք, քաղաքակրթությունների բրոդելյան տեսությունը ներկայանում է իրքն քազմաշերտ ու քազմիմաստ մի կառույց, որի մեջ (ըստ դարաշրջանի մարտահրավերի) կարող են ակտիվանալ նրա քաղաքական, մտակեցվածքային, կրոնական, տնտեսական և այլ քաղաքիչները: Եվրոպայի պարագային՝ Նոր ժամանակների արշալույսին, մեծ կարևորություն ձեռք բերեց հասարակական կյանքի կազմակերպման «տնտեսական-տեխնոլոգիական» զարգացումը:

«Նյութական քաղաքակրթություն» եզրը, լինելով ընդհանրական «քաղա-

96 F. Braudel, Grammaire des civilisations, pp. 40, 47, 50, 53, 66, 68.

97 F. Braudel, Civilisation matérielle, économie et capitalisme, XVe-XVIIIe siècle, Paris, t. I, p. 642.

98 Տե՛ս F. Braudel, Civilisation matérielle, économie et capitalisme, XVe-XVIIIe siècle, Paris, tt. I-III, 1979.

99 Տե՛ս F. Braudel, L'identité de la France, 3 voll., Paris, 1986.

քակրբություն» ստորոգության բաղկացուցիչներից մեկը, ունի տարասեռ բովանդակություն: Այն բացահայտվում է նախ և առաջ առտնին կյանքի զանազան դրսնորումների մեջ (առևտոր, ծովագնացություն, հաղորդակցություն, քաղաք, դրամաշրջանառություն, սննդուր, գներ, բնակավայրեր և այլն): «Երկար տևողության» ծիրում դրանց հաճալիր դիտարկումն էլ Ֆ. Բրոդելը համարում է «նյուքական կեցություն կամ նյութական քաղաքակրթություն»<sup>100</sup>, որը գոյություն ունի «ամենուր, կրկնվող է, անընդհատ լրացվում է, հոսում է կրկնության նշանի ներքո (routine)»<sup>101</sup>:

Շեշտենք մեկ անգամ Էլ՝ քաղաքակրթության այս տարատեսակի մեջ գերակայում է տնտեսական գործոնը<sup>102</sup>: Ուստի՝ նյութական քաղաքակրթությունը հնարավորին ընդգրկուն կերպով ներկայացնելու համար Ֆ. Բրոդել «ընկերային պատմության» կողքին ակտիվացնում է նաև «ընկերային տնտեսություն» հետաքրքր (socio-économies)<sup>103</sup>: Այդուհանդեռ, նա հստակ պատկերացնում է, որ դա հետազոտական հիմնախնդրի «անհրաժշտ պարզեցում է», քանզի «միայն այս երկու՝ ընկերային և տնտեսական կորդինատներն անքավարար են»<sup>104</sup>: Ուստի՝ նա դիմում էր «Երկար տևողության և անցյալի ու ներկայի երկխոսության» համադրական պատմությանը<sup>105</sup> այն դիտարկելով երեք հիմնարար չափույթների մեջ<sup>106</sup>: Դրանցից առաջինը կապված է մեզ արդեն հայտնի «անշարժ պատմության», երկրորդը՝ հաստատված ընկերային կառույցների դանդաղ փոխակերպման, իսկ երրորդը (կյանքի առավել արագ)` քաղաքական փոփոխությունների հետ: Ֆ. Բրոդելը հատկանշում էր, որ իր նպատակն է բացահայտել «նյութական կյանքի» (ինչպես նաև ընդհանրապես ընկերային կյանքի) քաղաքատեսակ սյուժեները»<sup>107</sup>: Այսպես, իր առջև խնդիր դնելով քափանցել «ոչ ձևական տնտեսության անքավանցության գոտիները»՝ Ֆ. Բրոդելը փորձում է հաղթահարել ավանդական իրականությունն «ըստ հրիգոնական հարբության» բացահայտելու՝ դրապաշտների մոտեցումները: Նա հստակ գիտակցում է, որ պատմությունը ինչ-որ համասեռ և ինքնարար ոլորտների մեխանիկական հանրագումար կամ հաջորդականություն չէ:

Որպես առաջին քայլ՝ Ֆ. Բրոդելը հետազոտության առարկա է դարձնում առտնին կամ նյութական կյանքի ոլորտները՝ ժողովրդագրություն, գներ, տեխնիկա, բնակավայրեր, արտադրություն, շուկաներ, քաղաքներ և այլն: Նպատակն է՝ որոշարկել տնտեսական կյանքի և նշակութային գոտիների «հնարավոր ու անհնարին սահմանները»: «Նյութական կյանքը մարդիկ են և իրերը, իրերն են ու մարդիկ: Հետազոտել իրերը՝ սնունդ, կացարան, հագուստ, պերճանքի առարկաներ, գործիքներ, դրամական միջոցներ, օյլուերի ու քաղաքների հատակագծեր, միով քանիվ՝ այն ամենը, ինչը ծառայում է մարդուն, ահա այն միակ միջոցը, որով հնարավոր է առտնին կեցության իմացությունը»<sup>108</sup>:

Լուսաբանելով առտնին<sup>109</sup> կյանքը՝ Ֆ. Բրոդելը նկատի ունի «Կեցության այն

100 F. Braudel, Civilisation matérielle, t. I, p. 8.

101 Ibid. p. 15.

102 Տե՛ս Ibidem.

103 Տե՛ս T. Stoianovich, Social History: Perspective of the Annales paradigm, Review, I, 3/4, (1977), p. 58.

104 F. Braudel, Civilisation matérielle, t. I, p. 642.

105 Ibid., p. 10.

106 Տե՛ս P. Burke, op. cit., p. 46.

107 Ibid., p. 631.

108 F. Braudel, Civilisation matérielle, t. I, p. 19.

109 Առաջնին պատմություն (L'histoire du quotidien) – պատմագիտական եզրո թարգմանել ենք «առտնին» բառով, որպեսզի չշփոթենք «առօրեական»-ի հետ, որը բրոդելյան պատմատեսության համապատկերում բոլորովին այլ իրողություն է:

կողմը, որի մեջ մենք ներգրավված ենք՝ անգամ ինքներս մեզ հաշիվ չտալով, քանի որ ստորույթի՝ ինքնին հոսող և ավարտվող հազարավոր գործողությունները չեն պահանջում որևէ մեկի վճռություն: Դրանք կատարվում են՝ գրեթե շառնչվելով մեր գիտակցությանը»<sup>110</sup>: Եվ քանի որ առտնին ողջ կյանքը մասն փաստերից է բարկացած՝ ժամանակի և տարածության մեջ հազիվ նկատելի, ապա դրանց հետազոտությունը ժամանակի երկար տևողության ծիրում հնարավորություն է տալիս մեկնարարանել աշխարհի դանդաղ փոփոխվող առանձին կառույցները, դրանց կուտակումները, անհավասար տեղաշարժերը: Այլ պարագայում դրանք գրեթե աննկատ են մնում<sup>111</sup>: Այս իմաստը, «փոքրիկ պատահարներից երևակվում է հասարակությունը»: Աննկատ և վաղանցիկ դեպքերի համադրությամբ կառուցվում է «հրապուրիչ» պատկերների մի շարան, որի միջոցով սկսում է ի հայտ գալ «համենդրկուն պատմությունը»<sup>112</sup>: Նման պատկերների բազմազանությունն է, որ պատմագետը պետք է դասակարգի և համակարգի՝ հնարավոր դարձնելով դրանց պատմական մեկնարանությունը: Իսկ այդ նպատակով հարկ է «մեկնեմիշտ ծերրազատվել ավանդական հնապաշտության կապանքներից»<sup>113</sup>:

Այստեղից էլ բխում է Ֆ. Բրոդելի հետազոտության **երկրորդ** մակարդակը՝ «փոխանակությունների խաղերը»: Այն նպատակ ունի վերլուծել տնտեսական տեղաշարժերի զանազան կերպերը՝ փողոցային շուկաներից մինչև կրպակներ, խանութներ, տոնավաճառներ ու շուկայական գոտիներ: Այս «փոխանակային խաղերը» Ֆ. Բրոդելը դիտարկում է երկու մակարդակով՝ շուկայական տնտեսության («բնական») և կապիտալիզմի («արիեստական») համոզված, որ «այդպիսի զանազանումը լիովին արդարացված է, քանի որ հնարավորություն է տալիս բացահայտելու մի կողմից տնտեսության մեջ ներգրավված տարասեռ ուժերը, մյուս կողմից՝ դրանք իրազործող մարդկանց գործողություններն ու նպատակարդումները (մտակեցվածքները)»<sup>114</sup>:

Այս կերպ Ֆ. Բրոդելը տարանջատում է շուկայական տնտեսությունն ու կապիտալիզմը՝ դրանք դիտարկելով իրքն արտադրության և փոխանակության երկու տարրեր համակարգեր<sup>115</sup>: Բրոդելյան այս մոտեցումը հնարավորություն էր տալիս ապրանքային փոխանակումների ընթացքը դիտարկել ավանդական շուկայից դեպի կապիտալիստական շուկան: Գործընթացը հեղինակն ուսումնասիրում է նախ և առաջ Միջնադարից դեպի Նոր դարեր անցնան դարաշրջանի համատեքստում: Նպատակին հետամուտ նա դիմում է **Ժ. Գուրվիչի** «ընկերային կառույցների հոգնակիության», **Ս. Կուլգնեցի** «գնագորյացման», **Կ. Փոլանիի** «մարդարանական տնտեսության» տեսությունների համադրությանը<sup>116</sup>: Դա նրա մոտեցումը դարձնում է «կառուցիկ և բազմարովանդակ»<sup>117</sup>: **Հաջորդ** հիմնախնդիրը, որ ծառացել էր Ֆ. Բրոդելի առաջ, պահանջում էր հաղթահարել կապիտալիզմի

110 **Փ. Բրուդել**, Динамика капитализма, Смоленск: Изд. “Полиграмма”, 1993, с. 13.

111 Տե՛ս **Ю. Н. Афанасев**, Фернан Бродель и гуманистарные знания, в книге: Ф. Бродель, Материальная цивилизация, экономика и капитализм, XV-XVIII вв.: т. 1, Структуры повседневности: возможное и невозможное, М., 2007, с. XXII.

112 F. Braudel, Civilisation matérielle, t. I, p. 17.

113 Ibid. p. 640-644.

114 F. Braudel, Civilisation matérielle, t. II, p. 8.

115 F. Dosse, Op. cit., p. 148.

116 Տե՛ս **Ս. Կուլգնեց (Simon Smith Kuznets; 1901- 1985)** – ռուսական ծագումով ամերիկացի տնտեսագետ, Նորեյան մրցանակի դափնիկիր (1971): **Կ. Փոլանի (Karl Paul Polanyi, 1886-1964)** - ամերիկյան և կանադական տնտեսագետ, մարդարան և ընկերաբան (հոնօգարական ծագման): Տնտեսական մարդարանության հիմնադիրներից մեկը:

117 P. Burke, Op. cit., p. 49.

տնտեսական համակարգի «սահմանափակությունը» և անցում կատարել «աշխարհ-տնտեսություն» հղացքիմ<sup>118</sup>: Ըստ նրա՝ այս հղացքը պետք է արտահայտեր աշխարհում ծավալող տնտեսական գործընթացների անհամաշխափությունը և ներկայացներ դրանք հավասարակշռող մակրոտնտեսական ու գեղաստմական զարգացումները: Տվյալ մոտեցմամբ՝ «աշխարհ-տնտեսությունը» պատմագետը սահմանում է իրեն մի հիմնարար եզր՝ կոչված շեշտելու, որ համաշխարհային մակրո և միկրո (առանձին տիրույթների) տնտեսությունների (ինչպես և հասարակությունների) մեջ գոյություն ունի որոշակի աստիճանակարգ՝ հիմնված զարգացման անհամաշխափությունների վրա:

«Աշխարհ-տնտեսության» հավասարակշիռ գործընթացն ավելի ընթանելի դարձնելու համար Ֆ. Բրոդելն առաջադրում էր «աշխարհի ժամանակ» ընթանումը, որը «չի կազմում, չի կազմելու մարդկության պատմությունն ամբողջականորեն», որը, կախված տեղից և դարաշրջանից, կառավարվում է որոշակի սկզբունքներով և նշանակություններով<sup>119</sup>: Ըստ հեղինակի՝ «աշխարհի ժամանակը» կազմում է համընդգրկուն պատմության վերմաշենքը<sup>120</sup>: Դրանցից Ֆ. Բրոդելն ածանցում է վերը քննարկված «համաշխարհային տնտեսություն» և «աշխարհ-տնտեսություն» հակացությունները: Ընդ որում՝ «աշխարհ-տնտեսությունը» նա հակադրում է գոյություն ունեցող «համաշխարհային տնտեսություն» հղացքին: Այն, ըստ էության, գերմաներեն «Weltwirtschaft» եզրի բրոդելյան թարգմանությունն է»<sup>121</sup>: Ֆ. Բրոդելը «աշխարհ-տնտեսությանը» տալիս իր մեկնարանությունը: «համաշխարհային տնտեսությունը ծավալվում է աշխարհով մեկ», իսկ «աշխարհ-տնտեսությունը աշխարհի սույլ մի մասում՝ ինքնարավ լինելու ընդունակ», որի ներքին կապերն ու փոխանակությունները ապահովում են որոշակի օրգանական միասնություն»<sup>122</sup>: Հետագա քննարկումներից պարզվում է, որ «աշխարհ-տնտեսություն» արտահայտում է համաշխարհային զարգացման ամենակարևոր միտումները: Այդուհանդեռձ, քննարկվող հղացքը բոլորովին էլ չի արտահայտում որևէ որոշակի «քաղաքակրթություն» կամ «հասարակություն»: Այն ունակ է միավորելու մի քանի (երբեմն հոյժ տարրեր) քաղաքակրթություններ՝ Արևմտյան Եվրոպա, Միջերկրական ծովի ավազան, Հեռավոր Արևելք, Լատինական Ամերիկա և այլն:

Համաձայն Ֆ. Բրոդելի՝ «աշխարհ-տնտեսությունը» որոշարկվում է երեք հիմնարար հատկանիշերով: **Առաջին** ունի որոշակի աշխարհագրական տարածք և հաղորդակցական սահմաններ: Դրանք կարող են լինել ինչպես բնական, այնպես էլ տնտեսական, մշակութային, հոգևոր (մտակեցվածքային), կրոնական և այլն: Ընդ որում՝ սահմանները թեպետ բավականին դանդաղ, բայց փոփխվում են: Երկար տևողության մեջ ժամանակ առ ժամանակ տեղի են ունենում այդ սահմանների անխուսափելի ճեղքումներ<sup>123</sup>: Քանի որ Ֆ. Բրոդելը հասարակությունը հետագործում է որպես տնտեսական ամբողջություն, ապա «աշխարհ-տնտեսության սահմանները գետեղվում են այնտեղ, որտեղ սկսվում են նույնակերպ

118 Տե՛ս F. Braudel, Civilisation matérielle, t. II, p. 10.

119 Տե՛ս Փ. Բրոդել, Материальная цивилизация, экономика и капитализм, XV-XVIII вв., Время мира, т. 3, Москва 2007, с. XVI.

120 Տամ же, с. XVII.

121 G. Gemelli, Fernand Braudel, Paris, 1995, p. 95.

122 Փ. Բրոդել, Материальная цивилизация, т. 3, с. 2.

123 Տե՛ս Փ. Բրոդել, Динамика капитализма, с. 85.

ուրիշ տնտեսությունները՝ ինչ-որ գծերի, ավելի ստույգ՝ ինչ-որ գոտիների երկայնքով։ Դրանց հատանցումը ինչպես այս, այնպէս էլ այն կողմից՝ տնտեսական առումով շահավետ է **միայն բացառիկ դեպքերում»<sup>124</sup>։ Մշակույթը ևս ներազում է «աշխարհ-տնտեսության» սահմանների վրա՝ պատճեզ կամ կապող օդակ հանդիսանալով տնտեսական փոխանակումների ճանապարհին։**

Մշակույթը ևս կարող է ձևավորել համակեցական տարածություն, քանի որ այս «մարդկության պատմության ամենահին գործող անձն է։ տնտեսությունները փոխարինել են մեկը մյուսին, քաղաքական հաստատությունները խորտակվել են, հասարակությունները՝ հաջորդել միմյանց, բայց մշակութային զարգացումը շարունակվել է»<sup>125</sup>։ Ֆ. Բրոդելն ընդգծում է, որ «մշակութային քարտեզներն անպայմանորեն չեն համընկնում տնտեսական քարտեզներին»։ Եթե տվյալ «աշխարհ-տնտեսությունը» այլ «աշխարհ-տնտեսություններին» դեմ առ դեմ ձգուում է տնտեսական, քաղաքական և մշակութային կարգերի միասնացման, ապա «իր իսկ ներսում քարտեզագրված մշակույթն ու տնտեսությունը կարող են ուժին տարանջատվել, երբեմն էլ հակագրել միմյանց»<sup>126</sup>։

**Երկրորդ՝ «աշխարհ-տնտեսությունը»** ունի իր քննոր կամ կենտրոնը, այն է՝ տիրապետող քաղաքը (անցյալում՝ քաղաք-պետությունը, այժմ՝ մայրաքաղաքը կամ տնտեսական կենտրոնը)։ Ընդ որում՝ քաղաքների «ակտիվությունը համաձայնեցվում էր տվյալ մայրցամաքի ակտիվության հետ», հանդիսանալով մի յուրօրինակ «Նոյյան տապան», որը ենթադրում է «պարտադրական համարերություն»՝ Լոնդոն, Փարիզ, Ամստերդամ, Նյու-Յորք, Տոկիո, Պեկին, Սուկիա։ Իսկ համարերության հրաշքները կրկին ու կրկին ի հայտ էին գալիս «ամենուր, ուր երևան են գալիս շուկաների կուտակումներ»<sup>127</sup>։ Մինույն «աշխարհ-տնտեսության» շրջանակներում միաժամանակ կարող են գոյություն ունենալ երկու կամ ավելի տնտեսական կենտրոններ։ Այդ կենտրոնը կամ կենտրոնները մնայուն չեն և ենթակա են փոփոխության՝ հրեթաց այս կամ այն աշխարհ-տնտեսական զարգացման։ Հնարավոր է նաև այլ տարրերակ. կարող են գոյություն ունենալ երկար ժամանակ և մրցակցել միմյանց հետ<sup>128</sup>։ Իսկ որևէ «աշխարհ-տնտեսության» կենտրոնի անկման արդյունքում ուժեղ ցնցումները զգալի են անգամ «ամենահեռավոր ծայրամասերում»<sup>129</sup>։

**Երրորդ՝ «աշխարհ-տնտեսությունը»** աստիճանակարգային կառույց է՝ քաղաքացած միմյանց ներկակ կամ համադրվող գոտիներից<sup>130</sup>։ Ուղղահայաց աստիճանակարգը ներկայացվում է ընկերային կառույցներով, որոնք գոյություն ունեն «աշխարհ-տնտեսության» բղոք գոտիներում։ Աստիճանակարգը «աշխարհ-տնտեսության» տարածական կառույցն է։ Այն գեղընկերային համակարգ է, որը քաղաքացած է երեք գոտիներից՝ «կենտրոն», «միջին գոտի» և «լուսանցքային գոտի»։ Վերջիններիս միջոցով Ֆ. Բրոդելը մոդելավորում է «աշխարհ-տնտեսության» փոխարարերությունների համակարգերը։ Այս իմաստով՝ «աշխարհ-տնտեսության» գործառնականացումն իրականացվում է «միջին» և

124 **Փ. Բրոդել**, Материальная цивилизация, т. 3, с. 18-19.

125 Там же, с. 47.

126 Там же, с. 48.

127 Там же, сс. 10, 11.

128 Там же, с. 84-85.

129 Там же, с. 14.

130 **Տես Փ. Բրոդել**, Динамика капитализма , с. 86.

«լուսանցքային» գոտիների հանդեպ «կենտրոնի» մշտական գերակայության հաստատման հիմքի վրա: Իսկ դա իր հերթին պայմանավորում է անհավասար, ոչ համարժեք հարաբերությունները<sup>131</sup>:

Այս ամենի համածիրում Ֆ. Բրոդելն առաջադրում է «կապիտալիզմ» հղացքի ոչ ափանդական բանաձևումը: Ըստ նրա՝ «կապիտալիզմը ո՛չ հասարակական-տնտեսական ֆորմացիա է, ո՛չ որոշակի տարածաշրջանում ընկերային հարաբերությունները կարգավորող և սեփական միջոցներով արտադրությանը կազմակերպող համակարգ է, ո՛չ էլ ինչ-որ մի առանձնահաստուկ ընկերային կառույց»: «Կապիտալիզմը» այդ ամենի ամբողջությունն է, յուրօրինակ մի «ինդիկատոր», որի հետազոտումը «նշանակում է անմիջականորեն մոտենալ հասարակական հիմնախնդիրներին և ակրոններին: Դրանք են՝ ժամանակի երկար տևողությունը, տնտեսական կյանքի տարրեր բնագավառները, աշխարհ-տնտեսությունները, հարյուրամյա և ավելի անկայունությունները, ընկերային աստիճանակարգի ցանցերը՝ տրամախաչվող և խառնակվող (չասելու համար դասակարգային պայքար), արդյունաբերական հեղափոխությունները և այլն...»<sup>132</sup>: Կապիտալիզմը համապարփակ է՝ ի սկզբանե ներկա ցանկացած «աշխարհ-տնտեսության» համածիրում, մարդկության պատմության ցանկացած դարաշրջանում. «քամելենն, որը կարող է փոխել գույնը, քայլ որը, չնայած դրան, միշտ էլ մնում է քամելենն»<sup>133</sup>: Այն է՝ փոխակերպությունների մի ամբողջ գործընթաց ժամանակի երկար տևողության ծիրում, այս կամ այն դարաշրջանում աշխարհ-տնտեսությունների միմյանց փոխարինելուց մինչև արդի համաշխարհային կարգի ձևավորումը:

Ֆ. Բրոդելին հաջողվել է «աշխարհ-տնտեսություն» հղացքի շնորհիվ ընկերային-տնտեսական գործընթացների հանդեպ նոր հայացք ձևավորել: Դրա անհրաժեշտությունը բխում էր ցայդ գերակայող պատմական մատերիալիզմի՝ իրականության միակողմանի մեկնարաբանությունից, որը միտում ուներ համայն պատմությունը բացատրել սուկ «տնտեսական դեսերմինիզմի» սկզբունքով: Բոլոր պատմական իրողությունների հիմք համարվում էր տնտեսությունը՝ արտադրություն, շուկա, դրամագիտանակություն և այլն:

Մինչեւ, «աշխարհ-տնտեսության» հղացքը հնարավորություն է տալիս ստեղծել ընկերային կառույցի այնպիսի հարացոյց, որը հիմնված է մարդկության պատմության բազմաչափ և բազմաշերտ ընբոննան վրա, քանի որ «աշխարհի պատմությունը արտադրական միջոցների սուկ համագոյություն չէ, որը մենք պետք է հետևողականորեն դիտարկենք տարրեր դարաշրջանների առնչությամբ»<sup>134</sup>: «Սիսալ է աշխարհ-տնտեսությունը ներկայացնել որպես ողջ հասարակությունը կառավարող, հասարակական այլազան կարգերը որոշարկող համակարգ», քանի որ «տնտեսությունը երբեք մեկուսացված չի լինում»<sup>135</sup>:

**Ընդհանրացնենք:** Վերոշարադրյալից ակնհայտ է դառնում, որ Ֆ. Բրոդելի «համընդգրկուն պատմության» հղացքը ունի համապարփակ-համալիր բովանդակություն, որի ծիրում պատմությունը օժտվում է իմաստային և կառուցվածքային ընդլայնման հնարավորություններով: **Բրոդելան եռաշերտ ժամանակաշափույթի հետնախորքի վրա՝ քաղաքակրթության, ինքնության, մտակեցվածքների և**

131 Տե՛ս Փ. Բրուդել, Մարտիալնա ցивилизация, տ. 3, ս. 18.

132 Տամ же, ս. 687.

133 Une leçon d'histoire de Fernand Braudel. Châteauvallon. Journées Fernand Braudel, Paris 1986, p. 145.

134 Փ. Բրուդել, Մարտիալնա ցивилизация, տ. 3, ս. 51.

135 Տամ же, ս. 26.

աշխարհ-տնտեսության զանազան լծորդումների համահարաբերակցումների շնորհիվ հնարավոր է դառնում պատմության «համընդգրկուն» ըմբռնումը: Միևնույն ժամանակ՝ վերջինս չի հանգում մեկ «ճշմարիտ» և միազին մեկնարանության: Բրոդելյան «համընդգրկուն պատմությունը» պարառում է իր առանձին մասերն իրու համակարգված ամբողջություն: Ընդ որում՝ դրանց լծորդումներն ու համադրությունները միատեսակ չեն: Նրանցից մի քանիսը երբեմն առաջնային դեր են խաղում, մյուսները՝ երկրորդական: Հաճախ այդ դերակատարումները փոխվում են: Այլ կերպ ասած՝ «համընդգրկուն պատմության» ծիրում գոյություն ունեցող կապերը բացարձակ հաստատուն կամ անշարժ իրողություններ չեն: Դրանք տարրեր են պատմական տարրեր իրադրությունների պայմաններում: Մի իրողություն, որը ճկունություն է հաղորդում դիտարկվող հղացքին:

Տարասեո լծորդումները պատմության բովանդակությանը նորանոր գրգիռներ են հաղորդում: Դրա շնորհիվ հնարավոր է դառնում «պատմության հորիզոնն» անընդհատ տեղաշարժել, դուրս բերել հաստատագրված սահմաններից: Ուստի՝ «համընդգրկուն պատմությունը» ներկայանում է լույլայնվող սահմանների մեջ: Այս պատմագետից պահանջում է գործընթացների տարաշափ և տարարժեք մեկնարանություններ:

Այսպիսով՝ Ֆ. Բրոդելը մերժում էր պատմությունը մեկ կամ մի քանի գործոններով մեկնարանող տեսությունները. «Զկա ավելի գայթակղիչ և միաժամանակ ավելի պատրանքային իրողություն, քան երևույթների միազին մեկնարանությունն է»<sup>136</sup>: «Համընդգրկուն պատմությունը», մեկնարկելով ժամանակի բազմախթմ ըմբռնումից, ենթադրում է գործընթացների անընդհատ վերաբրսնորման (և վերաշարադրանքի) անհրաժեշտությունը. «զի հընթաց ժամանակի փոփոխվում է հետազոտողի բանական աշքի ուսպնյակը, և վերջինս սկսում է անցյալում նկատել փաստեր, իրողություններ և իմաստային զարգացումներ, որոնք ցայդ մնացել են աննկատ և արժևությունը թերի»<sup>137</sup>: Սրանով Ֆ. Բրոդելը նոտեցել էր «իր իսկ ստեղծած համակարգի հայթահարման սահմանագծին»<sup>138</sup>, որն իրականացնում և ընթացք են տալիս Երրորդ սերնդի աննալականները:

136 F. Braudel, Ecrits sur l’Histoire, p. 133.

137 Ա. Ստեփանյան, «Պատմությունն իրու տեքստ (Մեկնություն և գրության հնարավորություն), Պատմություն և կրթություն, 1-2, (2005), էջ 13:

138 Ա. Ստեփանյան, Ե. Մարգարյան, անդ, էջ 40:

## Summary

### FERNAND BRAUDEL'S THEORY OF HISTORY

Smbat Kh. Hovhannisyan

In the context of the French Historical Annals School the achievements of the second Generation are significant. This mainly concerns Fernand Braudel in particular (1902-1985). He is famous not only in the framework of the School, but also in the historiography of the XX century.

F. Braudel's main contribution to the theory of history was the concept of "Universal History." It was outlined by L. Febvre and M. Bloch as a synthesis of different methods. The concept of "Universal History" is the result of that very approach.

The abovementioned makes it clear that Fernand Braudel's concept of "Universal History" has a holistic and complex content. At the same time it doesn't turn into one "true" and "common" interpretation. Braudel's concept of Universal History combines its different parts into one system. Moreover, their synthesis is various. Some of them have a primary, others a secondary role. Sometimes they tend to change. The concept of "Universal History" is possible as a consequence of the harmonization of the terms "civilization," "identity," "mentality," and "world-economy," in three-dimensional time. In other words, the concept of "Universal History" is a constant element of Braudel's understanding of history. They differ in different historical ages and events.